

**VIII. ՀՀ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀՀ ԱՎԾ-ԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ
ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՓԱՍՏԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾԱԽՍԵՐ**

Ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման ծրագրերի, 2012թ.-ի համար հաստատված «Բյուջետային հիմնարկի պահպանման ծախսերի» տարեկան ճշտված նախահաշիվների նկատմամբ փաստացի հատկացվել են.

- «Պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» (01.03.02.01) ծրագրով սահմանված ծախսերի ֆինանսավորումն առ 01.01.2013թ. կազմել է 622 275.68 հազ. դրամ՝ նախատեսված 630 464.00 հազ. դրամի փոխարեն կամ ներկայացված հայտերի հիման վրա փաստացի ֆինանսավորումը կատարվել է 98.7%-ով (2011թ.-ին՝ 99.2%): 2012թ.-ին դրամարկային ծախսը 2011թ. համեմատությամբ աճել է 112.89 հազ. դրամով, որը 2011թ.-ին կազմել էր 619 253.78 հազ. դրամ (տես՝ հավելված 2):
- «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» (01.03.02.02) ծրագրով սահմանված ծախսերի ֆինանսավորումն առ 01.01.2013թ. կազմել է 286 874.58 հազ. դրամ՝ նախատեսված 297 448.60 հազ. դրամի փոխարեն կամ ներկայացված հայտերի հիման վրա փաստացի ֆինանսավորումը կատարվել է 96.4%-ով (2011թ.-ին՝ 92.4%): 2012թ.-ին դրամարկային ծախսը 2011թ. համեմատությամբ աճել է 19 745.59 հազ. դրամով, որը 2011թ.-ին կազմել էր 267 120.9 հազ. դրամ (տես՝ հավելված 2):
- «2011թ. մարդահամարի նախապատրաստական աշխատանքների կազմակերպում» (01.03.02.04) ծրագրով սահմանված ծախսերի ֆինանսավորումն առ 01.01.2013թ. կազմել է 71 922.96 հազ. դրամ՝ նախատեսված 72 018.8 հազ. դրամի փոխարեն կամ ներկայացված հայտերի հիման վրա փաստացի ֆինանսավորումը կատարվել է 99.8%-ով (2011թ.-ին՝ 88.4%): 2012թ.-ին դրամարկային ծախսը 2011թ. համեմատությամբ նվազել է 195 475.62 հազ. դրամով, որը 2011թ.-ին կազմել էր 266 361.29 հազ. դրամ (տես՝ հավելված 2):
- «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ. «Ռեստորանների ծառայություններ մատուցող տնտեսվարող սուբյեկտների ընտրանքային հետազոտություն», «Անհատական բնակելի շենքերի ընտրանքային հետազոտություն», «Տրանսպորտային սարքավորումների ձեռքբերում» (11.01.01.01) ծրագրով սահմանված ծախսերի ֆինանսավորումն առ 01.01.2013թ. կազմել է 32 523.2 հազ. դրամ՝ նախատեսված 32 558.2 հազ. դրամի փոխարեն կամ ներկայացված հայտերի հիման վրա փաստացի ֆինանսավորումը կատարվել է 99.9%-ով: 2012թ.-ին դրամարկային ծախսը կազմել է 32 523.2 հազ. դրամ(տես՝ հավելված 2):
- Միջազգային համագործակցության շրջանակում իրականացվող ծրագրերի մասով 2012թ. մուտքը կազմել է 24 955.59 հազ. դրամ (մնացորդ առ 01.01.2012թ.՝ 50 744.72 հազ. դրամ) (տես՝ հավելված 2), այդ թվում՝
-«Մարդահամար 2011» դրամաշնորհային ծրագրի շրջանակում՝ 24 002.43 հազ. դրամ (մնացորդ առ 01.01.2012թ.՝ 48 474.25 հազ.դրամ), որից դրամարկային ծախսը կազմել է 68 713.25 հազ. դրամ:

-«Միջազգային համադրումներ» ծրագրի շրջանակում՝ 953.16 հազ. դրամ (մնացորդ առ 01.01.2012թ.՝ 2 270.47 հազ.դրամ), որից դրամարկային ծախսը կազմել է 3 223.58 հազ. դրամ: